

DOI: <https://doi.org/10.46991/FLHE/2024.28.1.115>

Վարդուհի ՂՈՒՎԱՍՅԱՆ*
Երևանի պետական համալսարան

ԹՎԱՅԻՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԼԵԶՎԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սույն հոդվածի նպատակն է դիտարկել թվային դիվանագիտության՝ որպես հաղորդակցության նոր միջոցի ռազմավարությունները, հաղորդակցական հարթակների լեզվական առանձնահատկությունները, ինչպես նաև վիրտուալ տարածքում դիվանագիտական հաղորդակցության դիսկուրսիվ ժանրերի գործառական յուրահատկությունները: Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ դիվանագիտական դիսկուրսի զարգացման ներկայիս մակարդակը համացանցում թույլ է տալիս խոսել թվային դիվանագիտության ձևավորման մասին՝ որպես դիվանագիտական դիսկուրսի նոր ձևի: Օգտագործվող սոցիալական ցանցերի ցանկը բազմազան է, սակայն թվային դիվանագիտության մեջ հիմնականները Facebook-ն ու Twitter-ն են, որոնք օգտատերերին հաղորդակցային լայն հնարավորություններ են ընձեռում: Թվային դիվանագիտությունը փոխում է խաղի կանոնները միջազգային հարաբերություններում: Ցանցերի օգտագործումը փոխել է դիվանագետների տեղեկատվական և վերլուծական աշխատանքի, ռազմավարության պլանավորման, արարողակարգային միջոցառումների իրականացման և բանակցությունների կազմակերպման գործընթացը:

Բանալի բառեր. դիվանագիտություն, դիվանագիտական դիսկուրս, թվային դիվանագիտություն, թվիպլոմատիա, հաղորդակցական ռազմավարություններ, սոցիալական ցանցեր

Ներածություն

Թվային դիվանագիտությունը համեմատաբար նոր ոլորտ է, որն առաջացել է ի պատասխան թվային տեխնոլոգիաների արագ աճի և միջազգային հարաբերությունների վրա դրանց ազդեցության: Արդի աշխարհում ակներև է միջազգային լարվածության մշտական աճը. անդա-

* varduhi.gbukasyan@ysu.am ORCID: 0009-0008-6878-1313



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Received: 26/02/2024
Revised: 09/04/2024
Accepted: 30/04/2024

© The Author(s) 2024

դար տեղի են ունենում գունավոր հեղափոխություններ, սահմանային բախումներ, ահաբեկչական գործողություններ, ներպետական ազգամիջյան կոնֆլիկտներ և տարածաշրջանային պատերազմներ, որոնց նախորդում և ուղեկցում են տեղեկատվական պատերազմները: Տեղեկատվական պատերազմը դարձել է ժամանակակից համաշխարհային քաղաքականության, դիվանագիտության և տնտեսության հիմնական միջոցը, քաղաքական, հոգևոր, ֆինանսական և տնտեսական իշխանության հասնելու եղանակը: Ստեղծված իրավիճակում դիվանագիտական հաղորդակցությունը ձեռք է բերում առանձնակի յուրահատկություններ, քանի որ, ինչպես և տեղեկատվական պատերազմները, այն տեղափոխվել է թվային միջավայր: Ձևավորվել է կայուն տեսակետ համապատասխան տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման շնորհիվ քաղաքական և դիվանագիտական գործընթացները կառավարելի դարձնելու վերաբերյալ: Թվային դիվանագիտության հիմնական առավելություններից մեկն այն է, որ այն թույլ է տալիս կառավարություններին շրջանցել ավանդական մեդիա ալիքները և ուղղակիորեն շփվել օտարերկրյա քաղաքացիների և շահագրգիռ կողմերի հետ: Սա կարող է նպաստել վստահության ձևավորմանը, թափանցիկության բարձրացմանը և երկրների միջև ավելի մեծ համագործակցության զարգացմանը: Վերջին շրջանում թվային դիվանագիտությանը նվիրված են բազմաթիվ աշխատանքներ, հիմնականում հոդվածներ (Викуллова и др., 2016; Горбачева, 2019; Цветкова, 2020; Алешкина, 2018; Lüfkens, 2017; Wilson, 2001; Adesina & Summers, 2017), որոնք հետևողականորեն վերլուծում են հանրային թվային դիվանագիտության մարտավարության և ռազմավարության իրականացման առանձնահատկությունները աշխարհի տարբեր երկրներում՝ «փափուկ ուժի» դիրքերից:

Թեպետ թվային դիվանագիտության նշանակությունն ավելի ու ավելի է մեծանում, այն դեռևս չունի պաշտոնական սահմանում: Ճշգրիտ սահմանում չունենալը հանգեցրել է նրան, որ տարբեր գիտնականներ տարբեր դիտանկյուններից են ուսումնասիրել թվային դիվանագիտությունը ուշադրությունը կենտրոնացնելով տարբեր կողմերի վրա՝ կիրառելով տանգենտներից մինչև սոցիալական ցանցեր: Այլ պատճառ է նաև այն է, որ թվային դիվանագիտությունը հաճախ տարբեր կերպ է անվանվում: Գիտնականները արդեն վաղուց են գործածում «կիրբերդիվանագիտություն», «ցանցային դիվանագիտություն», «էլեկտրոնային դիվանագիտություն» (e-diplomacy) և «թվիպլոմատիա» (twitplomacy) տերմինները (տես Lüfkens, 2017; Wilson, 2001; Bian, Yoshigoe, Hicks, Yuan, 2016; Burson & Wolfe, 2020; Collins, DeWitt, LeFebvre, 2019)

Հետազոտության *մեթոդաբանական* կարևորագույն սկզբունքը մարդակենտրոնությունն է: Հենց մարդակենտրոն մոտեցումն է, որի շրջանակներում դիվանագիտական դիսկուրսն ուսումնասիրվում է դրա առաջացման (հասցեագրողի դիրքերից), ընկալման (հասցեատիրոջ

դիրքերից) և հասցեատիրոջ վրա ներգործության դիտանկյուններից, թույլ տալիս առավել համապարփակ բացահայտել դիվանագիտության դիսկուրսի, ինչպես նաև թվային դիվանագիտության առանձնահատկությունները: Հետազոտությունը իրականացվում է միջառարկայական համալիր մոտեցմամբ դիսկուրսի վերլուծության առանցքային սկզբունքի կիրառմամբ:

Խոսքային ազդեցության միջոցները դիվանագիտական դիսկուրսում

Վերջին քսան տարում թվային հաղորդակցությունը դարձել է ամենօրյա իրողություն և անհրաժեշտություն: Արդի իրականության մեջ էլեկտրոնային հաղորդակցությունը կամ ամբողջովին փոխարինել է առերես հաղորդակցությանը, ինչն ակներև դարձավ 2020-2022 թթ. Համավարակի շրջանում, կամ զգալի չափով տիրապետող է դարձել: Բաց դիվանագիտական դիսկուրսի մի մասը էլեկտրոնային ձևաչափով ներկայացնելը հանգեցրեց դրա լեզվանշանային հարացույցի փոփոխությանը: Ընդհանուր առմամբ փոխվել է ինչպես տեղեկատվության ներկայացման ձևը, այնպես էլ հաղորդագրությունների տեքստային կառուցվածքը:

Ավանդաբար համարվում է, որ դիվանագիտական դիսկուրսի նպատակը հակասություններն անկոնֆլիկտ, խաղաղ լուծելն է: Դրա համար օգտագործվում են լեզվական հատուկ միջոցներ, մասնավորապես՝ խոսքի խուսափողական ձևակերպումները, դիվանագիտական վարվելակարգից չչեղվելը և հնարավոր քաղաքավարի հաղորդակցումն ապահովելը: Դիվանագիտական լեզվին բնորոշ է նաև լեզվարտահայտչական միջոցների ընտրությունը, որն ապահովում է խոսքի հակիրճություն և դրա արտաբերման ճշգրտություն, խոսքի կառուցվածքի անդեմություն, սուբյեկտիվության բացակայություն և դիվանագիտական էթիկայի պահպանում (Терехтнѣ, 2010): Սակայն արդի փուլում դիվանագիտական դիսկուրսն արդեն չի դիտվում միայն որպես միջպետական և միջգերատեսչական փակ հաղորդակցության միջոց (բանակցություններ դիվանագետների կամ դիվանագիտական կորպուսի աշխատակիցների միջև), այժմ այն միտված է դառնալու ավելի ու ավելի հրապարակային ուղղված լայն հասարակայնությանը:

Միջազգային կազմակերպությունների և գերատեսչությունների կողմից թվային հաղորդակցության միջոցների օգտագործումը ներկայումս համատարած է: Տարբեր երկրների ԱԳՆ-ների կողմից օգտագործվող կայքերը հրապարակում են արտաքին քաղաքականության գործերին վերաբերող մամուլի հաղորդագրություններ և հայտարարություններ, ինչպես նաև հեքքումներ այլ պետությունների կողմից հնչած մեղադրանքների և անթույլատրելի գործողությունների վերաբերյալ (Смирнов, 2017):

Մեդիատարածքում ավելի ու ավելի շատ հանրային հարթակներ են բացվում արտաքին քաղաքական գերատեսչությունների պաշտոնական

կայքեր, դիվանագիտական աշխատողների էջեր սոցիալական ցանցերում, խորագրեր պարբերական հրատարակություններում և ինտերնետային բլոգներում: Դիվանագետները դառնում են մեդիա դեմքեր, նրանց էլոյթներից մեջբերումներ են արվում ՁԼՄ-ներում:

Մեր դիտարկումները ցույց են տալիս, որ դիվանագիտական գերատեսչությունների պաշտոնական կայքերում գետեղված են հատվածներ քաղաքական առաջնորդների և դիվանագետների տեսանկարահանված էլոյթներից, փաստաթղթեր, ձայնագրություններ, մեջբերումներ, վիճակագրական տվյալներ: Սակայն թվային դիվանագիտությունը խոցելի է, քանի որ SS հարթակները սպասարկում են մասնավոր ընկերությունները, որոնք կարող են ցանկացած պահի արգելափակել ցանկացած օգտահաշիվ՝ ինչպես քաղաքական առաջնորդների (օրինակ՝ 2021 թվականին Դ. Թրամփի դեպքում), այնպես էլ կազմակերպությունների կամ պատվիրակությունների, ինչպես օրինակ ՌԴ պատվիրակության օգտահաշիվի արգելափակումը Վիեննայի բանակցությունների ժամանակ *Twitter*-ում 13.02.2021-ին:

Կայքերի ձևավորման համար կարևոր է գունային ծածկագրի ընտրությունը. գույնը ոչ միայն առաջ է բերում մարդու համապատասխան արձագանքը՝ կախված նրա հուզական վիճակից, այլև որոշակիորեն ձևավորում է նրա հույզերը: Կարմիրի իմաստային գունաբանությունը ամեն գնով հետաքրքրություն առաջացնելն է, նարնջագույնը աշխուժություն է ավելացնում, բայց միաժամանակ ստեղծում է ներքին հավասարակշռության և հոգևոր ներդաշնակության զգացում: Դեղինը տրամադրում է հաղորդակցման: Բացի այդ, դեղինն ունակ է նաև առարկային ինտելեկտով «օժտելու», ուստի, օրինակ, բարձր տեխնոլոգիական լուծումների դեպքում հաճախ է կիրառվում դեղինը: Կանաչը մեղմացնում և թեթևացնում է աչքումների սրությունը, կապույտը օգնում է կենտրոնանալու ամենաանհրաժեշտի վրա, և, ի տարբերություն կարմիրի, չի առաջացնում բացասական հույզեր: Սևը թույլ է տալիս կենտրոնանալ, սպիտակը համարվում է լիակատար գույն (տես *Eiseman, 2006; Roy Britt, Robert, 2009; Циферов, 2009*):

Դիվանագիտական կայքերի վերլուծության համար մեր կողմից ձևակերպվել են կայքի կառուցվածքի, դիզայնի, բովանդակության՝ առանձնահատկությունների չափանիշները: Ըստ այդ չափանիշների՝ պատահական ընտրանքի մեթոդով ընտրվել և դիտարկվել են աշխարհի մի շարք երկրների Հայաստանի, Վրաստանի, Ավստրիայի, Բելգիայի, Մարոկկոյի, Ռուսաստանի, ԱՄՆ-ի դիվանագիտական գերատեսչությունների կայքերը (2022 թ. փետրվարի դրությամբ):

Հայաստանի հանրապետության արտաքին գործերի նախարարության կայքում օգտատերը հեշտությամբ կգտնի տեղեկատվություն այն մասին, թե ինչպես կարող է օգտվել ԱԳՆ-ի ծառայություններից: Օգտատերը կարող է հեշտությամբ տեղեկատվություն ստանալ Հայաստանի

մասին: Տարրերը տեսակավորված են տրամաբանորեն: Հիպերհղումների վերնագրերը համապատասխանում են էջի վերնագրերին:

Կայքի տեքստը բաշխված է ըստ բաժինների, հեշտ է կարդալը և ընկալելը: Մեծածավալ տեղեկատվությամբ բաժիններ չկան: Կայքն ունի հայերեն, անգլերեն, ռուսերեն և ֆրանսերեն տարբերակներ: Կայքի լեզվանշանային ձևավորումը օպտիմալ է, հարմարավետ է և գեղագիտական առումով հաճելի: Տեղեկատվության կառուցվածքը հստակ է և տրամաբանական: Օգտակար տեղեկատվության ծավալի առումով խնդիրներ չկան:

Վրաստանի, Ավստրիայի, Բելգիայի արտաքին գործերի նախարարությունների կայքերում օգտագործող կզտնի տեղեկատվություն այն մասին, թե ինչպես կարող է օգտվել այդ ԱԳՆ ծառայություններից: Օգտատերը կարող է նաև տեղեկություններ ստանալ այդ երկրների մասին: Տեղացուցման սխեման հղումների ցանկ է, որը գտնվում է տեղեկատվության հիմնական բաժնի վերևում: Տեղացուցման վահանակներում տարրերի քանակը ողջամիտ է: Տարրերը տրամաբանական եղանակով տեսակավորված են, հիպերհղումների անվանումները համապատասխանում են էջի անվանումներին: Դասավորության սխեման մնում է անփոփոխ յուրաքանչյուր էջում, ինչը տեղորոշումը դարձնում է հարմար օգտագործողի համար: Գեղագիտական տեսանկյունից կայքերը պատրաստված են պարզ: Տեքստերի չափը և գույնը հաճելի են ու ընթեռնելի: Հղումները տրված են հարմար ու տրամաբանական ձևով: Տեքստերը զետեղված են ըստ բաժինների, հաճախ ուղեկցվում է տեսանյութերով: Բելգիայի արտաքին գործերի նախարարության կայքում գոյություն ունեն հղումներ նրանց համար, ովքեր ցանկանում են աշխատել և սովորել Բելգիայում: Տեքստերը կայքում տեղադրված են փոքր բաժինների տեսքով: Կայքն ունի ֆրանսերեն, գերմաներեն, անգլերեն, նիդերլանդերեն տարբերակներ:

Բոլոր կայքերում տեղադրված են ձևայունակներ, որտեղ օգտատերը կարող է նշել իր անունը, հեռախոսահամարը, էլ.փոստի հասցեն, որպեսզի կարողանա հարց ուղղել: Կայքերը համապատասխանում են առաջադրված խնդիրներին՝ արտաքին գործերի նախարարությունների մասին տեղեկատվություն ապահովելուն:

Մարոկկոյի արտաքին գործերի նախարարության կայքում օգտատերը կզտնի տեղեկատվություն այն մասին, թե ուր պետք է զանգահարի, քանի որ հիպերհղումների զգալի մասը չի աշխատում: Տեղացուցման սխեման անիմացիոն տարրերով հազեցած ուղղահայաց ցանկ է (սակայն հինգ հղումներից միայն երկուսն ունեն լողացող պատուհան), որը գտնվում է տեղեկատվության հիմնական բաժնի վերևում:

Կայքի դասավորության սխեման կարող է փոխվել (գլխավոր էջը և որոնիչը երկու տարբեր կայքեր են): Տեքստը չափի և գույնի առումով հաճելի է ու ընթեռնելի: Խնդիրներ են ծագում կայքի ծավալները

փոփոխելիս: Ծավալը փոքրացնելիս բաժինները կարող են իրար գլխի լցվել: Տեքստը տրված է բաժիններով, բայց առավել հաճախ դա հղում է մեկ այլ հղման վրա, որն ի վերջո հասցնում է pdf ֆայլի: Կայքն ունի անգլերեն, ֆրանսերեն և արաբերեն տարբերակներ:

Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարարության կայքը, գլխավորապես պահպանելով տեղեկատվության ներկայացման ընդհանուր ձևաչափը, օգտագործողին տալիս է մի շարք այլ լրացուցիչ հնարավորություններ: Այստեղ օգտագործողին հասանելի է առավելագույն հազեցվածություն ունեցող տեղեկատվություն, և հիպերհղումներով օգտագործողը հնարավորություն ունի գործելու և ծանոթանալու արտաքին գործերի տեքստերին, պաշտոնական հայտարարություններին, նախարարի հեռախոսային խոսակցություններին և այլ կարևոր փաստաթղթերի: Այս կայքը, ի տարբերություն դիտարկված բազմաթիվ այլ կայքերի, առավելապես տեղեկատվական-վերլուծական է և չի կատարում միայն արտերկրում Ռուսաստանի քաղաքացիներին աջակցելու գործառույթ:

Կայքն ընդհանուր առմամբ հարմարավետ է: Տեղեկատվությունը կառուցակարգված է ու տրամաբանական: Օգտակար տեղեկատվության ծավալի առումով խնդիրներ չկան: Այն մշտապես ենթարկվում է եական լրամշակումների ու փոփոխությունների և, ըստ էության, հազեցած ինտերակտիվ թվային գործիք է քսան տարբեր լեզուներով, որը նաև օգտագործելով տարբեր սոցիալական կայքեր (*Instagram*¹³, *Facebook*, *VK*, *Twitter* և նույնիսկ *TikTok*) մեծ ծավալի օգտակար տեղեկատվություն է մատուցում օգտագործողներին:

Ինչ վերաբերում է **Ամերիկայի Միացյալ Նահանգների** արտաքին գործերի նախարարության կայքին, ապա այն կարող է համարվել թվային դիվանագիտության առաջամարտիկ, քանի որ միջազգային հարաբերությունների սուբյեկտներից առաջինն է, որ սկսել է ինտեգրել թվայնացված մեթոդները քաղաքական ոլորտում: Այս ուղղությամբ համեստ փորձեր արվել են դեռ Բիլ Կլինթոնի օրոք, սակայն միայն Ջորջ Բուշ Կրտսերի վարչակազմը սկսեց լրջորեն զբաղվել այս հարցով: Հանրային դիվանագիտության մեջ տեղեկատվական տեխնոլոգիաների լայնածավալ ներդրման մեկնարկը տրվեց Բ. Օբամայի և նրա աշխատակազմի կողմից (Cull, 2013, էջ 127):

ԱՄՆ պետդեպարտամենտի պաշտոնական կայքում տեղադրված հաղորդագրություններն ուղղված են լայն լսարանին, այսինքն այս ժանրի շրջանակներում հասցեատերը բնակչության տարբեր խավերի, տարբեր տարիքային խմբերի ներկայացուցիչներն են և միջազգային հարաբերությունների ոլորտում իրավասության տարբեր մակարդակներ ունեցող անձինք:

ԱՄՆ պետդեպարտամենտի կայքում տեսատեղեկատվությունն ու տեքստը համաժամանակյա, «զուգահեռ» ներկայացնելու հնարավորու-

թյուն է տալիս (օրինակ՝ պետքարտուղարի ելույթի տեքստը և այդ ելույթի տեսաձայնագրությունը): Այն տալիս է տեղեկատվությունն ընկալելու լուրջ առավելություն, մասնավորապես նրանց, ովքեր անգլախոս են, բայց ոչ անգլերեն լեզվակիրներ: Անհրաժեշտ է ավելացնել, որ ԱՄՆ պետքարտուղարության պաշտոնական կայքում գոյություն ունեն նաև ուղերձներ, առավելապես հայտարարություն-շնորհավորանքներ և հայտարարություն-ցավակցություններ: Այդ հայտարարությունները հրապարակվում են ի պատասխան աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների:

ԱՄՆ պետդեպարտամենտի հրապարակումների հաջորդ տեսակը աշխատակիցների ելույթների շարադրանք է: Այս հաղորդագրությունները զետեղված են կայքում «*Press Availability*», «*LIVE AT STATE*» և «*Interview*» խորագրերի ներքո:

Պաշտոնական կայքում պարբերաբար հրապարակվում են ԱՄՆ պետքարտուղարի մամուլի ասուլիսները նաև ԱՄՆ պետդեպարտամենտի մամուլի քարտուղարի ձեպագրույցները պետքարտուղարության ընթացիկ աշխատանքների վերաբերյալ:

Դիվանագետների հրապարակային ելույթների բառապաշարն աչքի է ընկնում բազմազանությամբ: Այստեղ կարելի է հանդիպել ինչպես դիվանագիտական/քաղաքական հասկացությունների (*council person – խորհրդի անդամ, the Arctic Council / Արկտիկական խորհուրդ, closest allies – ամենամոտ դաշնակիցներ և այլն*), այնպես էլ խոսակցական-կենցաղային բառերի, սոցիալական կամ բարբառային սահմանափակմամբ արտահայտությունների (*folks, guys, heads up, zinger* և այլն) և հուզագնահատողական բառապաշարային միավորների:

Դիվանագետների հրապարակային ելույթների շարահյուսական բնութագիրը կարող է ներկայացվել ինչպես գերակտիվ խոսքային գործողություններում պարզ և կարճ կառույցների տեսքով («*Oh, good for you*», «*That's right*»-ն այլն), այնպես էլ մենախոսական տեքստերում բարդ և ամբողջական կառույցների տեսքով: Ի տարբերություն գրավոր հայտարարության դիվանագետի բանավոր խոսքը ձգտում է ոճի պարզեցման և ավելի ազատ կառուցվածքի, որպես կանոն, լսարանի հետ փոխգործակցելու նկատառումով: Բանավոր ելույթների տեքստերում հաճախ նկատվում են թերասություն և հակադարձում:

Պետդեպարտամենտի բյուրոյի ղեկավարների միջոցառումների ժամանակացույցը պարբերաբար հրապարակվում է պաշտոնական կայքում՝ «*Public Schedules*» խորագրի ներքո: Նշյալ տեքստերն ունեն կայուն շարահյուսական կառուցվածք և շարադրանքի որոշակի ձև, որը միտված է տեղեկություն հաղորդելուն և նմանօրինակ տեքստերում հաճախակի կրկնվող արտահայտություններն են «*closed press coverage; daily public schedule is subject to change...*»:

ԱՄՆ պետդեպարտամենտի դիվանագիտական գերատեսչության կառուցվածքում յուրաքանչյուր բաժին ունի իր որոշակի նպատակը:

Կայքի առաքելության առաջնային հաղորդակցական նպատակադրումը հասարակությանն իրազեկելն է պետդեպարտամենտի գործունեության մասին: Սակայն պետք է նշել, որ այդ տեքստերը կարող են ունենալ նաև համոզելու գործառույթ, այսինքն՝ դրանք կարող են ուղղված լինել ընթերցողին համոզելուն, կառույցի դրական կերպարը ձևավորելուն: Այսպիսի տեքստերի շարադրանքի ոճը այժմ է ընկնում հակիրճությամբ (որպես կանոն՝ հաղորդագրությունը 1-2 նախադասություն է), արտահայտության ճշգրտությամբ, որն էլ զերծ է ավելորդ արտահայտչականությունից և հուզականությունից:

Այսօրվա դրությամբ կարելի է մատնանշել թվային դիվանագիտության գործիքների օգտագործման տարբեր ոլորտներ.

Հասարակական կարծիքի ձևավորում: Թվային դիվանագիտության միջոցները թույլ են տալիս տարածել ցանկալի տեղեկատվությունը մեծ թվով բնակչության շրջանում, այդ թվում նաև արտերկրում: Օրինակ՝ ԱՄՆ պետդեպարտամենտը ակտիվորեն օգտագործում է այս ռազմավարությունը թվային փոխգործակցության հարցերի գրասենյակի օգնությամբ, որի կազմում ընդգրկված են բլոգերներ և թիրախային ուղղվածության թիմեր:

Ահաբեկչության դեմ պայքար: Այս ռազմավարության կիրառման օրինակ է «Digital Outreach Team»-ի աշխատանքը, որի էությունը իսլամիստական ահաբեկչության վերաբերյալ հասարակական կարծիքի ձևավորումն է արաբերեն բլոգերի և տարաբնույթ քննարկումների օգնությամբ ԱՄՆ-ի և Մերձավոր Արևելքի երկրների միջև հարաբերությունների թեման լուսաբանելու համար:

Ընդդիմության աշխուժացում: Որոշ երկրներ, մասնավորապես ԱՄՆ-ն, փորձել են միավորել արտասահմանյան երկրների քննադատությամբ հանդես եկող համացանցային ընդդիմությունը օգտվելով երիտասարդների և լրագրողների շրջանում իրավապաշտպանների, ինչպես նաև ակտիվիստների աճող ազդեցությունից: Նրանք նաև ֆինանսավորում են ոչ կառավարական, հասարակական այնպիսի կազմակերպություններ, ինչպիսիք են՝ Internews, Meta-Activism Project, Mobile Accord Inc, MobileActive, New Tactics, Open Net Initiative, Tech Change, Activism Media Politics, Ashoka:

Տեղեկատվության հավաքում: Նման գործառույթը թույլ է տալիս ստանալ տեղեկատվություն երկրների պետական կառավարման, նրանց տնտեսական իրավիճակի վերաբերյալ, ռազմական տվյալներ և այլն:

Արտաքին քաղաքականության տեղեկատվական խնդիրների համար բլոգն օգտագործող դիվանագետը ստանձնում է նաև լրագրողական գործառույթներ, ինչը հաստատում է ժամանակակից բաց դիվանագիտության դիսկուրսի և մեդիա դիսկուրսի կապը: *Facebook*-ը և *Twitter*-ն օգտագործվում են հաղորդակցական նույն նպատակով՝ բլոգ վարելու: Միակ տարբերությունը, որն ուշադրության արժանի է,

տեքստային հաղորդագրությունների ծավալն է. *Facebook*-ում տպագիր տեքստի ծավալն անսահմանափակ է, այնինչ *Twitter*-ում այն չի գերազանցում 140 նիշը: Փաստորեն, *Facebook*-ը բլոգ է այս եզրույթի դասական իմաստով, իսկ *Twitter*-ը՝ միկրոբլոգ: Շատ միկրոբլոգներ թույլ են տալիս հաղորդագրություններին կցել մուլտիմեդիա, շփվել այլ օգտատերերի հետ, ինչպես չատում: Մեծ մասամբ միկրոբլոգները հարմարեցված են շարժական սարքերին: Այսպիսով, բջջային սարքեր օգտագործողները հնարավորություն ունեն տեղեկատվություն ստանալու փաստորեն ցանկացած մուտքի կետից՝ հայտնվելով տեքստային տեղեկատվության անդադար հոսքի մեջ: *Twitter*-ը ստեղծելով դիվանագիտության յուրօրինակ ձևը՝ ներկայումս դարձել է ժամանակակից միջազգային դիվանագիտության անբաժանելի մաս:

Այսօր մենք ականատեսն ենք այնպիսի երևույթի զարգացման, ինչպիսին է *թվիպլոմատիան* (*twiplomacy*), որտեղից էլ ծագել են այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են «*թվիթեր կամ թվիթ դիվանագիտությունը*», որն ըստ էության ավանդական և թվային դիվանագիտության և *Twitter*-ի միավորումն է: Երբ համաշխարհային առաջնորդը թվիթ է անում համաշխարհային իրադարձության կամ քաղաքականության վերաբերյալ, այլ դիվանագետ գործիչներ դիմում են հիմնական լրատվամիջոցներին կամ պատասխանելու թվիթին, կամ պաշտպանելու այն, կամ պարզապես իրենց կարծիքն արտահայտելու տվյալ հարցի վերաբերյալ: Այս պատասխաններն իրենց հերթին ավելացնում են անցանց քննարկումը, որը, հետևաբար, ձևավորում է հանրային կարծիք:

Շատ երկրների դիվանագիտական ծառայություններ օգտագործում են *Twitter*-ը մարդկանց հետ անմիջականորեն շփվելու և արտաքին քաղաքական բանավեճերին ավելի մասնակցային բնույթ հաղորդելու համար: *Twitter*-ի դիվանագիտությունը, այդ առումով, արտաքին քաղաքական բանավեճերը դարձրել է ավելի թափանցիկ: Թվիպլոմատիան խրախուսում է քաղաքացիներին ներգրավվել արտաքին քաղաքական բանավեճերում և մասնակցել որոշումների կայացման գործընթացին՝ դրանով իսկ ավելի մասնակցային դարձնելով քաղաքական որոշումները (տես՝ Schwarzenbach, 2015):

Օրինակ՝ Ճապոնիայում G20-ի 2019 թվականի հունիսին կայանալիք հանդիպումից առաջ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփն իր օգտահաշվից թվիթ է արել. *“I look forward to speaking with Prime Minister Modi about the fact that India, for years having put very high tariffs against the United States, just recently increased the tariffs even further. This is unacceptable, and the tariffs must be withdrawn!”* (Donald Trump’s post)

Թրամփը պատրաստ է քննարկել Հնդկաստանի հետ ունեցած իր տարաձայնությունները Ճապոնիայի վարչապետ Մոդիի հետ, ակնկալելով վերջինիս աջակցությունը:

Դիվանագիտության թվիթերային հարթակում հանդես գալը օգտակար է նաև ճգնաժամերին արձագանքելու գործում: Մրա վառ օրինակ է Հնդկաստանի նախկին արտգործնախարար Սուշմա Սվարաջի թվիթերում վարած քաղաքականությունը: 2019 թվականի մարտի 10-ի առավոտյան Եթովպիայի ավիաուղիների "Boeing 737 800 Max" ինքնաթիռը վթարի է ենթարկվում Եթովպիայի մայրաքաղաք Ադիս Աբեբայից հեռանալուց անմիջապես հետո: 157 գոհվածների թվում չորս հնդիկ կային: Նույն օրը Հնդկաստանի նախկին արտգործնախարար Սուշմա Սվարաջը օգտագործում է *Twitter*-ը մահացածներից մեկի ընտանիքի հետ կապ հաստատելու համար. *"I am trying to reach the family of Shikha Garg who has unfortunately died in the air crash. I have tried her husband's number many times. Please help me reach her family"* (Shushma Swaraj's post).

Տարբեր կազմակերպչական գործողություններ իրականացնելուց և տեղեկություններ հավաքելուց հետո կառավարությանը վերջապես հաջողվում է կապ հաստատել մահացածի ամուսնու հետ: Սա առաջին դեպքը չէ, երբ նախարարը *Twitter*-ում է հանդես գալիս՝ օգնելու արտերկրում գտնվող հնդիկներին:

Կառավարության պաշտոնյաների և դիվանագետների ու քաղաքացիների միջև հաղորդակցության դյուրացման հակառակ կողմն այն է, որ *Twitter*-ի ոչ պաշտոնական միջավայրը կարող է խաթարել ավանդական դիվանագիտության ազդեցությունը: Օրինակ՝ Թրամփի թվիթն այն մասին, որ նա չեղարկել է իր «գաղտնի հանդիպումը» Աֆղանստանի նախագահի և թալիբների առաջնորդների հետ Քեմփ Դեյվիդում, կասկածներ և զարմանք առաջացրեց *Twitter*-ում, քանի որ ազգային անվտանգության օրինական նկատառումները վերածվեցին թվիթերյան դիպվածային նյութի:

Մի քանի դեպք է տեղի ունեցել, երբ համաշխարհային առաջնորդները լեզվակոճի մեջ են մտել *Twitter*-ի պատճառով: Դոնալդ Թրամփի Հյուսիսային Կորեայի առաջնորդ Կիմ Չեն Ընի դեմ ուղղված ծանր թվիթները բազմիցս հանգեցրել են Հյուսիսային Կորեայի և ԱՄՆ-ի միջև հակամարտության սրման՝ 2017 թվականի հուլիսին երկու կողմին էլ գրեթե հասցնելով միջուկային վեճի եզրին:

2017 թվականի հուլիսի 3-ին, երբ Հյուսիսային Կորեան արձակեց հերթական միջուկային հրթիռը, Դոնալդ Թրամփը ծաղրելով թվիթերում գրեց. *"North Korea has just launched another missile. Does this guy have anything better to do with his life?"* (Donald Trump's post).

Այս հայտարարությանը արձագանքեց Հյուսիսային Կորեայի առաջնորդը, որն իր ամանորյա ելույթում նշեց. *"It's not a mere threat but a reality that I have a nuclear button on the desk in my office. All of the mainland United States is within the range of our nuclear strike."*

Սրան ի պատասխան Թրամփը թվիթերում գրեց. *"North Korean Leader Kim Jong Un just stated that the 'Nuclear Button is on his desk at all*

times. 'Will someone from his depleted and food starved regime please inform him that I too have a Nuclear Button, but it is a much bigger & more powerful one than his, and my Button works!' (Donald Trump's post).

Բարձրաստիճան դիվանագետների, այդ թվում նաև ՄԱԿ-ի անդամ երկրների մշտական ներկայացուցիչների ելույթները նախապես պատրաստված են, որոնցում յուրաքանչյուր բառը պետք է մանրակրկիտ ծանրութեթև արվի, քանի որ կարող է լուրջ արձագանք առաջացնել համաշխարհային հանրության շրջանում: Հուզաարտահայտչական բառապաշարի կիրառումը, որը որոշ դեպքերում կարող է դառնալ կոնֆլիկտածին (Беляков,Максименко, 2019), պետք է արդարացված լինի դիվանագիտական նպատակներով՝ իհարկե չանտեսելով արտաքին գործոնների արձագանքը: Ուստի վերլուծություն կատարելու համար անհրաժեշտ է պարզել հաղորդակցական իրավիճակը, որում հնչում է սվյալ ելույթը:

Այս դարաշրջանում թվային տեխնոլոգիաների կիրառությունը մեծ տարածում է գտել նաև Միացյալ Թագավորության արտգործնախարար՝ Ջ. Բլեյրլիի ելույթներում: Նա հաճախ է օգտագործում հարթակները մարդկանց հետ ուղիղ կապ հաստատելու համար, ինչպես օրինակ, իր թվիթեյան էջում հայտնել է Չիլիի արտգործնախարարի հետ իր հանդիպման մասին՝ միաժամանակ տրամադրելով հավելյալ տեղեկատվություն և տեսանյութեր քննարկված թեմաների արդյունքների վերաբերյալ: Այս կամ այլ թեմայի վերաբերյալ իր սեփական կարծիքը հայտնելով նա նպատակ է հետապնդում ավելի մոտ լինել ընթերցողներին և ազդել նրանց գիտակցության վրա: Ինչպես օրինակ Բլեյրլիի հրապարակումը Ռուսաստանի դեմ պատժամիջոցներ կիրառելու մասին: Պուտինի անօրինական ներխուժումից գրեթե 1 տարի անց՝ Ուկրաինայի իրավիճակի վերաբերյալ խորհրդարանում ծավալված բանավեճում Ջ. Բլեյրլիի ելույթի (General debate on Ukraine, 20 February 2023: Foreign Secretary's opening statement) ուսումնասիրությունը թույլ է տվել առանձնացնել երկու տեսակի հուզական միավորների խումբ՝

1) հակամարտություն և սպառնալիք պարունակող բառապաշար. *Russian forces have killed thousands of Ukrainians; a hostile attack; the Ukrainians have uncovered mass graves; evidence of rape and torture on an unimaginable scale; wiping out their country; aggression; withdrawing his forces; casualties are immense; key weapons and ammunition; the frontline of a war; the early stages of this conflict; a fighting chance; the battlefield; to target civilian infrastructure; force; Putin's brutality; poisonous Russian propaganda; largest and most severe package of sanctions ever; we will crack down ruthlessly on those who seek to evade sanctions; Abuses and violations of human rights; torture and killing of civilians;rape and sexual violence; left vulnerable to attack; barbaric attacks; relentless attacks and bombardment.*

2) հուզական երանգավորմամբ բառապաշար, որում արտացոլված են խոսողի գնահատողական դատողությունները. *his invasion was unprovoked and it was illegal; I predicted that if Putin was foolish enough to invade Ukraine; freedom will win; we have become the closest of friends, and the most committed of partners; we are inspired by their heroism and the resilience of the Ukrainian people; we come together as never before; We share a common purpose; Putin shows no sign of withdrawing his forces; that is why we and our allies must step up our efforts to ensure that Ukraine wins this war and secures a lasting peace; I saw for myself and I understand fully that they will defend themselves and their land, whatever the cost may be; they will never give in, they will never surrender; I want to pay tribute and commend my Right Honourable friends; we are proud to be the largest supplier of military aid to Ukraine after the United States of America; I know this House will join me in calling; we share their determination that Putin's illegal attempted invasion will fail:*

Այս հուզական միավորները մեծ մասամբ դուրս են գալիս մեկ բառի շրջանակից և ներկայանում են որպես շարահյուսական բառակապակցություններ: Նշված ելույթում բառերի ընդհանուր քանակը 1500 է: Հուզականորեն երանգավորված բառապաշար, գնահատողական դատողություններ և երկիմաստ արտահայտություններ օգտագործվել են ավարտուն արտահայտությունների 25,81%-ում, այսինքն՝ բոլոր արտահայտությունների մեկ քառորդում: Պետք է նշել, որ Ջ. Քլեյրլիի ելույթի նպատակն է արձարժված հիմնախնդիրների վերաբերյալ հուզական արձագանք առաջացնելը ոչ միայն գործընկերների, այլև բոլոր նրանց շրջանում, ովքեր դիտում/լսում են ելույթը համացանցում, ինչը կարելի է դիտարկել որպես տեղեկատվական ներգործության բաղկացուցիչ մաս: Հայտնի է, որ համաշխարհային առաջատար քաղաքական գործիչների ելույթները, հատկապես միջազգային խնդիրների վերաբերյալ, մեծ թվով դիտումներ են հավաքում:

Քանակական և որակական բովանդակության վերլուծության մեթոդը թույլ է տալիս պարզել, մի կողմից՝ տեքստի թեմատիկան, իսկ մյուս կողմից՝ ըստ տրված չափորոշիչների դրա հուզական բնութագիրը: Բաց մասնագիտական դիվանագիտական դիսկուրսի ելույթներում հուզական արտահայտությունների և բառապաշարային միավորների ընտրության հարցում նկատելի է տեղեկատվական ազդեցության ուղղվածությունը: Առավելագույն ազդեցություն ելույթը թողնում է միայն այն ունկնդիրների վրա, որոնք լսում են նման ելույթները առանց թարգմանության: ՋԼՄ-ները, որպես կանոն, հեռարձակում են ելույթներից հատվածներ, որոնք պարունակում են հուզական երանգավորմամբ բառապաշարի մեծ տոկոս, ինչը ստեղծում է խտացված հուզականության տպավորություն: Մակայն հարկ է նշել, որ ՄԱԿ-ի ԱԽ նիստերին մշտապես մասնակցող դիվանագետները ավելի քիչ են ենթակա զգացմունքային ներգործության:

Տպավորությունն ավելի է թուլանում համաժամանակյա թարգմանության պատճառով, որի բուն խնդիրը առավելապես փաստացի տեղեկատվության ճշգրիտ փոխանցումն է, իսկ առավել մեծ հուզականություն պարունակող տարրերը, մեծ մասամբ շրջանցվում են քանի որ գործնականում անհնար է ակնթարթորեն ընտրել հաջող համարժեք հեզնանքի կամ սարկազմի տարրերով, ինչն էլ փոխում է խոսքի տոնայնությունը: Համացանցային հաղորդակցության առանձնահատկությունները հնարավորություն են տալիս օգտվելու խոսքի ազատությունից: Մակայն պետության պաշտոնական ներկայացուցչի կողմից գործընկերոջը ծաղրելը, սպառնալիքներ հնչեցնելը կամ վարկաբեկելը կարող է հանգեցնել միջազգային լարվածության սրման:

Օրինակ՝

Foreign Minister Hits Out Against Bill Clinton’s “Insults” At The Hungarian People

Not even a former President of the United States can allow himself to insult the Hungarian people, Hungary’s Minister of Foreign Affairs has said in response to former US President Bill Clinton’s claims that Poland and Hungary “have now decided democracy is too much trouble, therefore “they want Putin-like leadership.” In a statement sent to the state news agency MTI, Mr. Szijjártó wrote that contrary to Bill Clinton’s claims, Hungary’s freedom was delivered by Hungarian people and not the United States, with tens of thousands of Hungarians sacrificing their lives for Hungarian freedom. “To underestimate the freedom struggle of the Hungarian people in such a way is unacceptable”, the foreign minister said.

Bill Clinton clearly knows that Hungarian people made their decision on the country’s future at democratic parliamentary elections, Mr. Szijjártó pointed out. “The decision of the Hungarian people may not appeal to Bill Clinton, but this is insufficient justification for the former U. S. President to insult them in such a way”, the minister wrote.

The 70-year-old politician, who served as President of the United States between 1993 and 2001, made the claims at a campaign event last Friday to support his wife Hillary in New Jersey(Bill Clintons insults Hungarian people).

Վերոբերյալ ելույթում Հունգարիայի արտաքին գործերի նախարարը պարոն Միյարտոն քննադատում է Հունգարիայի ժողովրդի հասցեին Բիլ Բլինթոնի «վիրավորանքները»: Բիլ Բլինթոնը նման հայտարարություն էր արել Նյու Ջերսիում իր կնոջը Հիլարիին աջակցելու քարոզարշավի ժամանակ: Մասնավորապես Բիլ Բլինթոնը ասել է, որ Լեհաստանն ու Հունգարիան որոշել են, որ ժողովրդավարությունը չափազանց մեծ խնդիր է, հետևաբար նրանք ցանկանում են պուտինյան ղեկավարություն

(...have now decided democracy is too much trouble, therefore “they want Putin-like leadership): Ի պատասխան իր հայտարարության մեջ պարոն Միլարտոն գրել է, որ Հունգարիայի ազատության համար տասնյակ հազարավոր հունգարացիներ զոհաբերել են իրենց կյանքը: «Նման կերպ թերագնահատել հունգար ժողովրդի ազատագրական պայքարն անընդունելի է»,- ասել է արտգործնախարարը:

Ինքնաներկայացման ռազմավարություն իրականացնելիս ընդդիմախոսին կոպտելու, նսեմացնելու և վիրավորելու մարտավարությունը օգտագործվում է նաև այլ երկրների հանրային դիվանագիտության ավանդույթում:

Այն բանից հետո, երբ ԱՄՆ անօդաչու թռչող սարքը հարվածեց Իրանի ռազմական հրամանատար Քասեմ Սոլեյմանիին և սպանեց, Իսլամական Հանրապետության նախարար Մոհամմադ Ջավադ Ազարի - Ջահրոմին ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփին անվանեց “terrorist in a suit” (կոստյումով ահաբեկիչ) համեմատելով նրան ISIS-ի, Ադոլֆ Հիտլերի և Չինգիզ խանի հետ:

The United States President Donald Trump is “a terrorist in a suit”, Iranian Information and Telecommunications Minister Mohammad Javad Azari-Jahromi tweeted on Sunday.

*Like ISIS, Like Hitler, Like Genghis! They all hate cultures. Trump is a **terrorist in a suit**. He will learn history very soon that NOBODY can defeat ‘the Great Iranian Nation & Culture’, Jahromi tweeted. (MJ Azari Jahrom’s Post)*

2017 թվականի սեպտեմբերին Հյուսիսային Կորեայի նախագահ Կիմ Չեն Ընին ուղղված միջուկային պատերազմ հրահրող սպառնալիքները թվիթերում գրելիս ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփին իր գործընկերոջն անվանեց “little rocket man”: Ապրիլի 30, 2017 տված հարցազրույցում Թրամփը Կիմ Չեն Ընին անվանեց “pretty smart cookie”՝ 2011 թվականին պաշտոնը հոր մահից հետո ստանձնելու համար:

*A lot of people, I’m sure, tried to take that power away, whether it was his uncle or anybody else. And he was able to do it,” Trump said. “So obviously, **he’s a pretty smart cookie** (Trump calls North Korean leader a ‘pretty smart cookie’).*

Իսկ Կիմ Չեն Ընին նրան անվանեց *mentally deranged dotard* (խելքը թոցրած ծերուկ, ինտելեկտի կամ ըմբռնման խանգարում ունեցող մարդ), որն օգտագործվում է նկարագրելու ծերունի, թույլ մարդուն: Թեժ բանավեճը հանգեցրեց երկու երկրների միջև լարված իրավիճակի: Հյուսիսն առաջին անգամ պարոն Թրամփին անվանել է ծեր ու թույլ 2017 թվականին:

Պահպանողական բրիտանացի պատգամավոր Մարկուս Ֆիշը Դոնալդ Թրամփին անվանել է *“The orange prince of American self-publicity”*:

Փարիզի քաղաքապետ Անն Իդալգոն ասաց. *Mr Trump is so stupid My God, My God (Պարոն Թրամփը այնքան հիմար է, Աստված իմ) (Video-Trumpissostupid)*.

Դանիայի ֆինանսների նախկին նախարար Քրիստիան Յենսենն ասել է, որ *Դոնալդ Թրամփը փոխում է իր կարծիքը այնպես, ինչպես մենք ներքնազգեստ ենք փոխում*:

Մեծ Բրիտանիայի վարչապետ Բորիս Ջոնսոնը տխրահոշակ է դիվանագիտական շփումների ժամանակ անպատշաճ բաներ ասելով: 2007 թվականին Ջոնսոնը, որն այն ժամանակ արտգործնախարար էր, Հիլարի Քլինթոնի մասին գրել է. *“She’s got dyed blonde hair and pouty lips, and a steely blue stare, like a sadistic nurse in a mental hospital” (Նա ներկած շեկ մազեր ու փքված շրթունքներ ունի և դաժան հայացք, ինչպես հոգեբուժարանում գտնվող սադիստ բուժքույրը) (Some of the most horrifying diplomatic insults of all time)*.

Բայց հատկապես առանձնանում է նրա արտահայտությունը 2017 թվականի հոկտեմբերին պատերազմից տուժած Լիբիայի Սիրթ կոչվող քաղաքում կուսակցական հանդիպման ժամանակ: Ջոնսոնն ասաց, որ Սիրթը կարող է դառնալ նոր Դուբայ: *“The only thing they have to do is clear the dead bodies away,” he added before bursting into laughter. It sparked anger within his own Conservative Party to the point that certain MPs called him “crass and cruel” (Միակ բանը, որ նրանք պետք է անեն, դիակները հեռացնելն է, - ավելացրեց նա ծիծաղելով: Դա վրդովմունք առաջացրեց նրա Պահպանողական կուսակցության ներքում այն աստիճան, որ որոշ պատգամավորներ նրան անվանեցին «անխիղճ և դաժան»)(Some of the most horrifying diplomatic insults of all time)*.

2013-ին գազաթնաժողովում Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի պաշտոնական խոսնակ Դմիտրի Պեսկովը Բրիտանիան անվանեց *“diplomatically irrelevant”*: Նրա խոսքերն էին. *Բրիտանիան/ փոքր կղզի է նրանց վրա ոչ ոք ուշադրություն չի դարձնում “Britain is] just a small island no one pays any attention to them” (Some of the most horrifying diplomatic insults of all time)*.

Վերոբերյալ օրինակներում նկատվում են ագրեսիայի տարրեր: Դիվանագիտական հաղորդակցության մեջ քաղաքական գործունեությունն առանձնանում է ագրեսիվության (վճռական պայքար հանուն սեփական գաղափարների) և հանդուրժողականության (հաղորդակցության այլ մասնակիցների գաղափարների և արարքների նկատմամբ) մշտական դիալեկտիկայով: Հաղորդակցական (խսքային և ոչ խսքային) ագրեսիան, որպես կանոն, աճում է հասարակության մեջ սոցիալական լարվածությանը զուգահեռ և նվազում, երբ անհրաժեշտ է համատեղ

գործել. նշյալ դրույթը թույլ է տալիս եզրակացնել, որ դիվանագիտական հաղորդակցության մեջ, որն ուղղված է խաղաղ միջոցներով համագործակցության հաստատմանը, ագրեսիան պետք է առկա լինի նվազագույն չափով:

Եզրակացություն

Վերը նշվածից պարզ է դառնում, որ զանազան համացանցային հարթակներում բավականին հաջողությամբ իրականացվում են հասարակական գիտակցության մանիպուլացման ռազմավարություններ: Ուսումնասիրելով թվային դիվանագիտությունը հասկանում ենք, որ այն դարձել է հետազոտությունների կարևոր առարկա, մեծ տարածում և կարևորություն է ստացել աշխարհում: Քանի որ տեխնոլոգիաները շարունակում են զարգանալ, մենք կարող ենք ակնկալել, որ դիվանագիտության մեջ թվային հարթակների էլ ավելի նորարար կիրառումներ կլինեն, սկսած վիրտուալ գազաթնաժողովներից մինչև էլեկտրոնային դիվանագիտության ուսուցման ծրագրեր: Այնուամենայնիվ, կարևոր է գիտակցել, որ թվային դիվանագիտությունը չի կարող որևէ կերպ փոխարինել ավանդական դիվանագիտությանը, այլ միայն կարող է լրացնել այն: Որքան էլ զարգացում ապրի թվային դիվանագիտությունը, մեկ է, դեմ առ դեմ փոխազդեցությունները և անձնական հարաբերությունները մնում են վճռորոշ դիվանագիտության պրակտիկայի համար, և թվային հարթակները պետք է օգտագործվեն այդ փոխգործակցությունը բարելավելու, այլ ոչ թե փոխարինելու համար:

Ակնայտ է, որ դիվանագիտական դիսկուրսը ներկայումս տեղափոխվել է սոցիալական մեդիա, որը, ըստ պնդումների, նպաստում է քաղաքացիների միջև հաղորդակցության հաստատմանը, ապահովում հանրային տարածքի հասանելիությունը շատ քաղաքական սուբյեկտների համար, ստեղծում պայմաններ քաղաքական գործընթացին քաղաքացիների մասնակցության համար և իրացնում հանրային շահերը: Այս պարագայում իհարկե պետք է խոսել նոր տեսակի դիվանագիտական դիսկուրսի ձևավորման մասին, ավելի որոշակի՝ թվային դիվանագիտության կամ սոցիալական ցանցերի դիվանագիտության դիսկուրսի, որը համակցում է քաղաքական և մեդիա դիսկուրսների առանձնահատկությունները:

Գրականություն

- Adesina, O. S. & Summers, J. (2017). Foreign policy in an era of digital diplomacy. *Cogent Social Sciences*, 3(1).
- Bian, J., Yoshigoe, K., Hicks, A., Yuan, J. (2016). Mining Twitter to Assess the Public Perception of the “Internet of Things”. *PLOS ONE*, 11(7).

- Burson, Cohn & Wolfe. (2020). Twiplomacy Study. <https://twiplomacy.com/blog/twiplomacy-study-2020>.
- Cull, N. J. The Long Road to Public Diplomacy 2.0: The Internet in US Public Diplomacy. *International Studies Review*, 2013, Vol. 15, № 1, 123–139.
- Collins, S., DeWitt, J., & LeFebvre, R. (2019). Hashtag diplomacy: twitter as a tool for engaging in public diplomacy and promoting US foreign policy, *Place Branding and Public Diplomacy*, vol. 15(2), 78-96.
- Eiseman, L. (2006). *Color - Messages and Meanings: A PANTONE Color Resource*, Cincinnati, North Light Books.
- Lüfkens, M. (2017). Twiplomacy. <https://www.burson-marsteller.com/what-wedo/our-thinking/twiplomacy-2017/twiplomacy2017-full-study/>.
- Schwarzenbach, B. (2015). Twitter and diplomacy: How social media revolutionizes interaction with foreign policy. <http://www.the-diplomatic-embassy.com/2015/10/12/twitter-and-diplomacy-how-social-media-revolutionizesour-interaction-with-foreign-policy/>.
- Roy Britt, R. (2009). Red vs. Blue: Why Necktie Colors Matter, Live Science <http://www.livescience.com/3281-red-blue-necktie-colors-matter.html>.
- Wilson, P. Dizard, (2001). *Digital Diplomacy: U.S. Foreign Policy in the Information Age*. Westport: Praeger.
- Алешкина, Н. С. (2018). Цифровая дипломатия: новые инструменты «мягкой силы». *Вестник Поволжского института управления*, Том 18, №1, 143-149.
- Беляков, М. В., Максименко О. И. (2019). Поликультурная дипломатическая коммуникация (на примере выступлений в Совете Безопасности ООН). В сб. *Профессиональная картина мира: кросс-культурный диалог*. Материалы Международной научно-практической конференции. Отв. ред. Е.Ф. Тарасов. М., ИЯ РАН, 292-295.
- Викулова, Л. Г., Макарова, И. В., Новиков, Н. В. (2016). Институциональный дискурс цифровой дипломатии: новые коммуникативные практики. *Вестник ВГПУ*. Серия 2: Языкознание, Т. 15, № 3, 54-63.
- Горбачева, Е. Н. (2019). Цифровая дипломатия vs традиционная дипломатия с позиций дискурсивной перформативности (на материале англо- и русскоязычных дипломатических заявлений). *Известия ВГПУ*. №5(138), 164-169.
- Смирнов, А. И. (2017). *Современные информационные технологии в международных отношениях*. https://www.mgimo.ru/upload/iblock/b41/%D0%A1%D0%BC%D0%B8%D1%80%D0%BD%D0%BE%D0%B2_%D0%A1%D0%98%D0%A2%D0%9C%D0%9E_10_2017.pdf
- Терентий, Л. М. (2010). Дипломатический дискурс как особая форма политической коммуникации. *Вопросы когнитивной лингвистики*, N 1. Тамбов.
- Цветкова, Н. А. (2020). Феномен цифровой дипломатии в международных отношениях и методология его изучения. *Вестник РГГУ. Серия: Политология. История. Международные отношения*. № 2, 37- 47.

- Циферов, И. (2009). Цвет влияет на принятие решений. <http://itnews.com.ua/analytics/212.html>.
- Bill Clinton's insults Hungarian people. <https://hungarytoday.hu/foreign-minister-hits-bill-clintons-insults-hungarian-people-51651/>.
- General debate on Ukraine, 20 February 2023: Foreign Secretary's opening statement. <https://www.gov.uk/government/speeches/ukraine-foreign-secretary-opens-general-debate-february-2023>.
- 'Mr Trump is so stupid'<https://www.facebook.com/BBCLondon/videos/mr-trump-is-so-stupid/1132191906822505/>.
- MJ Azari Jahrom's Post. https://twitter.com/azarijahromi/status/1213743_924952666114?lang=en.
- Some of the most horrifying diplomatic insults of all time. <https://economictimes.indiatimes.com/news/international/world-news/stinging-retorts-some-of-the-most-horrifying-diplomatic-insults-of-all-time/putin-on-britain-others/slide-show/73211465.cms>.
- Sushma Swaraj's post. <https://twitter.com/sushmaswaraj/status/1104952495527378944?lang=gl>
- Trump calls North Korean leader a 'pretty smartcookie'. <https://abcnews.go.com/Politics/trump-calls-north-korean-leader-pretty-smart-cookie/story?id=47118212>
- U.S. President Donald Trump's post. https://twitter.com/ANI/status/1144096143967772677?ref_src=twsrc%5Etfw
- U.S. President Donald Trump's post. <https://twitter.com/realDonaldTrump/status/882061157900718081>
- U.S. President Donald Trump's post. <https://twitter.com/realDonaldTrump/status/94835557022420992>
- U.S. President Donald Trump's post.https://twitter.com/ANI/status/1144096143967772677?ref_src=twsrc%5Etfw

В. Гукасян – Лингвистические характеристики цифровой дипломатии. – Цель данной статьи – рассмотреть стратегии цифровой дипломатии как нового средства коммуникации, выявить лингвистические особенности коммуникационных платформ, а также функциональные характеристики дискурсивных жанров дипломатического общения в виртуальном пространстве. Актуальность исследования обусловлена недостаточным освещением в лингвистической литературе новых жанров и коммуникативных стратегий цифровой дипломатии. Современный уровень развития дипломатического дискурса с использованием IT технологий в сети Интернет позволяет говорить о становлении цифровой дипломатии как новой формы дипломатического дискурса. Каждый сайт дипломатического ведомства должен иметь ссылку на официальные аккаунты в различных социальных сетях. Список используемых социальных сетей разнообразен, но

основными в цифровой дипломатии являются Facebook и Twitter, которые предоставляют пользователям широкие возможности общения. Цифровая дипломатия меняет правила игры в международных отношениях.

Ключевые слова: дипломатия, дипломатический дискурс, цифровая дипломатия, твипломатия, коммуникативные стратегии, социальные сети

V. Ghukasyan – Linguistic characteristics of digital diplomacy – *The purpose of this article is to consider the strategies of digital diplomacy as a new means of communication, the linguistic features of communication platforms, as well as the functional features of discursive genres of diplomatic communication in the virtual space. The relevance of the study is also due to the insufficient coverage in the linguistic literature of new genres and communication strategies of digital diplomacy. The current level of the development of diplomatic discourse using IT technologies on the Internet allows us to talk about the emergence of digital diplomacy as a new form of diplomatic discourse. Each website of a diplomatic department must have a link to official accounts on various social networks. The list of social networks used is varied, but the main ones in digital diplomacy are Facebook and Twitter, which offer users a wide range of communication opportunities. Digital diplomacy is changing the rules of the game in international relations.*

Key words: *diplomacy, diplomatic discourse, digital diplomacy, twiplomacy, communication strategies, social networks*